Չորրորդ Տարի

# ԽԱԹԱԲԱԼԱ

Գինն է 10 կ. Գաւառներում 12 կ. 1909, Շաբաթ, Նոյեմբերի 7-ին. Թիֆլիս. № 45.

## ՀԱՅ ԿԵԱՆՔԸ



Худож.-Лит. С. Быхова, Тифлисъ

Մեր գործիչները թէև եւրոպականացած, սակայն դեռևս ասիական գործիքներով են պարում, իսկ կրթւած հայ հասարակութիւնն էլ, ով ինչպէս ածում է, նա էլ պարում է անտակտ։



Ճիշտ բադերի նման յունական պրինցներն էլ հերթով ու խիստ կարգով, զինուորական շորերը հանած և գնում են արտասահման հանգստանալու.





—Քեռխուտ ջան, վերին Աստուած՝ ներքևը դու, բալիս մի քեամաղ անես։

—Արխէին կաց, իմ խաթրը դարկան է. նաչալնիկին, մարշալին մի բան որ տանեմ, բալքի կարող են չըլանեն. դու բաջաղլուները էլի հաղթէ։ Տաս որդի էլ ունենաս՝ էլի կազատեմ։

ՇԱՐՈՒՆԱԿՒՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

1909

4 ՏԱՐԻ **ԽԱԹԱԲԱԼԱ** 4 ՏԱՐԻ

Երգիծաբանական-սատիրական պատկերազարդ շաբաթաթերթ

ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ԱՄԷՆ ՇԱԲԱԹ ԱՆԽԱՓԱՆ

Պաշտօնական օրգան բոլոր հայ և օտարազգի գործիչների, որոնք արժանի են ծաղրանկարւելու, քննադատւելու, ծաղրի և ծիծաղի։

«Խաթաբալայի» բաժանորդները, այլև երդեան ընթերցողները ԱՊԱՀՈՎԱԳՐՒԱԾ ԵՆ ամեն տեսակ պատահարներից և խայտառակութիւններից։

Խմբագրութիւնը բաց է՝ երբ փակ չէ, և գտնւում է Սերգէեւսկայ փող. № 1

Տուն Եղբ. Միրզոյեանցների վերի յարկում

Յայտարարութիւններ ամէն լեզուներով և խիստ մատչելի գներով։

Մեր ընթերցողներին մօտ ենք ածում սեփական աէրօպլաններով։

Բազմաչխատ գործակալներին և «Խաթաբալայի» պրօպագանդիստ տարածողներին «Խաթաբալան» ուղարկում ենք ձրի։





ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է

| | | |
|---|---|---|
| Տարեկան Թիֆլիզում | 4 ր. | դուրսը 5 ր. |
| Կէս տարւանը . . . . | 2 ր. | . . . . 3 ր. |
| Երեք ամսւանը . . . | 1 ր. 50 կ. | |
| Ամիսը . . . . . . . . . . | 50 կ. | |

Մեր հասցէն՝ Тифлисъ, Редакція „Хатабала“.

Արտասահմանից՝ Tiflis (Caucase) Re'daction „Khathabala“.

Խմբ. հրատարակող՝ ԱՍՏ. ԵՐԻՑԵԱՆ

ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՒԱՑ ՎԵՐՋԸ «ԽԱԹԱԲԱԼԱՆ» ԱՐԺԷ 1 ՌՈՒԲԼԻ։



*Արթուն և պատրաստ եղէ՛ք* ✡ ✡ ✡ ✡ ✡

—○ ՇՈՒՏՈՎ ԲԱՆԱԼՈՒ ԵՆՔ ○—

„ԽԱԹԱԲԱԼԱՅԻ“

1910 ԹՎԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ


## ՊՕԼԻՏԻԿՕՒՐԻ ԳՈՒՐՁԻՐԸ

Արդաբիլ անունը լսած կուլիք, սա մէ քաղաք է Ղզլբաշի հուղում, վուրդի խիստ էժանութին կէր վախտով։

Ձուն տասը մէ շահի էր ծախւում, օխչըի մսի լիդրը էրկու շայի ու օխտը գրօշ։ Էտի սպրեյիս ին էլի շահսեւաննիրը, մէ ինչ վուր խան թէ գահրումար Ռահիմ խանի հիդ. էս Ռահիմ խանն էլ հարուստ մարթ է էլի. (ով գիդի մէ էրկու հարիր կնիկ էլ է ունեցի լօթին, չուռքի ասում ին կնգդերանց էժնութին է, կօսէ, Ղզլբաշի հուղումը)։

Հիմի էտ Արդաբիլում էլ ձուն, ան օխչըի միսը էնենց է թանգացի, վուր մէ մանէթով էլ չիս ճարի, կօսէ։ Բադիրուգին, քիշմիշ լարլարն Արդաբիլում տասարի չէշուղ էր ազաք, հիմի խուրմա ու սիմինդ էլ չի մնացի, կօսէ, չուռքի էտ բէմուրազ Ռահիմ խանը մէ պատուհաս է դառի,—«չիմ ուզի իս հիմիկւայ շահի մօղ էլած մարթկերանց, կօսէ». Էս մարթիքն էլ էչմիածնի ինտրիգանների խասիաթն ին ունեցի ու վունց վուր էչմիածնականնիրը գիդին, մէկմէկու ջգրու վանքն էլ ին քանդում, սաղն էլ ու իրենց էլ՝ էնենց էլ սրանք, համ իրանց թաքաւուրին ին զարար տալի, համ Արդաբիլին ու համ էլ Ղզլբաշի խիղճ ու կրակ համշարէքուն, չուռքի, ինչ է միդեզը, միդեզը էն է, վուր Ղզլբաշի ցօցիալնիրը՝ մոլլէքն ու սէյիդնիր, բուրոկրատնիրն ու շահ զադէքն ին էլի։

Մարթ չիմ ասում, ու էշի անդադէն կի կօսիմ, վուր էշն էլ կուլի վուր հասկանայ, թէ մոլլէքեմէն. սէյիդներեմէն, բուրօկրատներեմէն ու շահզադեմէքէն ինչ թուուր կօնցիտուցիա կու ասցի, ինչ թուուր ցօցիալութին կուլի։

Աղջիկ քիզ իմ ասում, հարս դուն իմացի։

—

Բերձէնների աչխրքի խասօրին էլ իմացած կուլիք, էնդի էլ մէ քիչ սըրտնիրը խառնւում է, ու կուլի վուր հէստի բան էլ ըլի, վուր էս տարի գէթխա խիլին ու ջոնջոլին խիստ թանգանայ. սոկօն խօ թանգ է ու թանգ, լաւ չորացած ու օրթունքով լիքը սոկօն՝ վից արաստով չիս կանայ ճարի. ձէթխախիլին խօ վից շայի, օխտը շայի ձըլու ինք ճարում. էստի ինչ սրտի խառնւելու ժուղ էր, համա մարթիք վուր չին գիդում բանի զօրութինը, չին գիդում էլի. հիմի վուր բերձեններու թարաւուրութէնում չփոթնիր ու աջարանդալութիննիր ըլին, լաւ կուլի. Սուսայի դրանցմէն բուրկէն էլ կու թանգանայ, կիպորչխալէն էլ, է, սըրփերի պատկերնիրը խօ հասը մէ արասի կու դառնայ, ինչի վուր ձէթխախիլին, ջոնջոլը, բուրկէն կիպորչխալէն ու սուփերի սուրաթներու փաքրիկէքը դիփ սրանց՝ բերձէններու ձեռին է։

—

Աֆղանստանում... հիմի գիդի՞ք թէ Աֆղանստանը ինչ է։ Վուր ասում իմ. էտ բանն էլ չիք գիդի՞, համա, թէ վուր հաւուց խասօրին կարթացիլ իք, պիտի գիդենաք. Աֆղանստանի հիդ մինք կունիր ինք ունեցի ղզլբաշներու խաթրու։

ბიბლიოთეკა

«Ու գնաց Վարթանը Բուշաններու ու Ալղաններու քիթը ջարթից, կօսէ»
Մաշ։
«Ցաղերար, կօսէ, հայ ազերքոց (դաշնակցականներուն ու հնչակութէնին չըգինար) գրգից, կօսէ, Բուշան ու Ալղանըրատան օպիրուէքով»։

Էս ինչի համա է ասած. Աստուծ վուչ գիդի փիս մարթու գլուխը, էնդուր է ասած։ Աղաք հիմիկւայ թաւուր խօ չէր, ծիար ինչ է, ծիար չէր կանայ իր տիգեմէն մէ ուրիշ տիղ թուչի. փէյքարը (ստայն) գարեգւայ չէր անի օձորքում արլարուղա գուրձիլ, ծառեմէն փաթոլ չէր կանայ դիվիր ննգնի, մինչկի, հայ կամքը չէր։

Սմավարը ձվ մոզանից։

Մաշինէն ձվ շինից։

Պարախոդնիրը ով հնարից։

Միր քախկի բորանը վուր կայ, մօգել է. մօգել է Ալէքսանդրէ Թաախովի գլուխը, Թաժակի ճառիրը, Հաջի Ամբարցումի բոյն ու բուստթը, Թաշլամովի սե-սեութինը իվ այլն, իվ այլն։

Հա, ճշմ էն էի ուզում ասի, վուր էտ Աֆղանստանումն էլ են ուզում հիմի կօնցիտուցիա դցի. խիստ էլ լաւ կօնին. նրանք ճւմիցն են պակաս, իս ու իմ Աստուծը, միր ազերքիցը մէ էրկու գուժին վուր գնան էնդի՝ լաւ կուլի, թէ չէ էտ ինչ թաւուր կօնցիտուցիա կուլի, վուր մինք մէշը խաար չինք։

Էտ բանը իսկի չի կանայ վուր ըլի։

—

Ափրիկի աշխըրքումը, մէ իրգիր կայ, վուր ասւում է Հարէշստան. էսաի խալխը ասում ին, հաւ գինի, հաւ ջինսի է էլի օրանց համա իսիմ աչքով տեսիլ իմ, ռանիրը բլոմա փուղ խարջեցին, ու էնդի վարթապիտ, տէրտէր ու տիրացու ղրգեցին, թէ ինչ է նրանք, էգ Հարէշստանու խալխին մէ քիչ հաւատի բերին. մէ պիանից Լէօնտի կէր, լաւ տանյուղով էնդի է հիհի. էս Հարէշներու բաղկումը հայիր էլ կան՝ ու չունքի վուրդի հայ կայ, էնդի «Թաթարալէն» անպակաս պիտի ըլի, բաս էտու համա էլ, միր «Թաթարալէն» ամեն շափաթ իր ազաթով գնում է իրա վուտով էնդի, միր բաժանուրդներուն։

Հա, հիմի ինչ պտի ասիմ։

Էտ կի չէ ու, դուրթ ու դուրթ իմացիլ իք, թազա թազա խաբրնիր, Պետերբուրխեմէն մէ պօլկօֆնիկ, փամիլէն էլ, Բէյնիգէն՝ էկիլ է ու ուզում է վուր, էս շափաթ Զուբալովի գալումը խօսէ, կօսէ, ստ իմացիլ է թէ Թատիսովը շատ է սիրում խօսիլ, ջալդ ինքն էլ էկիլ է, վուր մէ իրմին էլ ինքը շանէ։ Էս պօլկօվնիկը ասու՝է,—վուր հազար ինը հարիր եարսունուէրկուսին աշխարքիս վերջը ուրիշ թաւուր կուլի, կօսէ, միր Տէր Ամենակալ Իսուս Քրիստոսին Իրա ջարի ջարամաթ հրիշտակներով դիվիր գուքայ, կօսէ, ու մինչկի հարիր քսասունչուրս հազար մեռելնիր կու վիկենան, կօսէ. իժում էս մեռելնիրը թաքաւուրութին կօնին, կօսէ. էս հարիր քսասունչուրս հազար մեռելնիրը, արթար ու լաւ լաւ մարթիք ին, կօսէ...

Հիմի իս, վունչիչ, դուրթ է մեռելներուց չիմ վախում, համա էն իմ ուզում ասի. թէ Աստծուն ինչ խէր վուր մեռելնիրը վիկենան ու թագաւորին տայրին. փիէ, էսաի ով վուր ապրում ինք, խիստ խերումէինք, վուր նուր մէկսնց մեռելներան էլ ուզում ին վիկացնի, կենթանացնի. արա էտ վճւնց կուլի. վուր վունչիչ չըի, վուր ուրիշ զարարնիր չըի, խօսքի գէլիշ էտ հարիր քսասունչուրս հազար մարթու թագաղան մեռնիլը, թագաղան կուրօ առնիլը, թագաղան թաղիլը, տէրտէր տիրացու, մղզնի ու սուդարի խարջը, քէլեխն ու կողոպուտը, «Լիստուկի» արխաւլէնէքի, տէլէգրաֆնիրը ջահանդամը էտուն էլ չըի,—ուրիշ ձվ գիդի ինչ դդած հացն ու պանիրը, լօբին ու կարտօֆիլը կըթանդանայ, լօբին էս սահաթիս գըվանքէն էրկու շայի ածէ, էս ինչ թաւուր պօլիտիկա է անում Աստուծը. իս չիմ գիդում, Իրան Իրան համ ձեռւմ է, համ կարում. բաս հաքր չէ, վուր մէ կօնցիտուցիա էլ էնդի, վերև՝ իրգնքումը մոզանինք։ Բաս էս օրէնք է, էսաի—կօնցիտուցին ժուղը էնդղամ մարթիք կոտորեցին, թէ հացը, ապրուստը, օթախնիր մէքիչ էլա էժնանայ, ու հիմի թագաղան հարիր քսասունչորս հազար մարթ պիտին կենթանացնի, կօսէ։

Վա, իս արթնում իմ գջլսած հաքիս գիդենայ. եարար գիդենայի, իմ ճանանչնիրեմէն ով կայ իրգնքումը, մէ նամակ կու գրիմ, գիփ արզա կօնիմ, ու կօսիմ, վուր չըթողնի Աստուն էտ թաւուր պօլիտիկա բանեցնիլը, վուր աշխըքի համա էլ, ու իրգնքի համա էլ խիստ զարար է։

Հա էն էի ասում, էտ Հարէշներու թաքաւուրը, Նեղուս Մէնէլիքը, հիմայ խիստ հիւանդէ, կօսէ, ու կուլի վուր չլաւնայ, կօսէ՛։ Վա՛յ դարդիս...

Ա՛յթէ պօլէտիկուրի աշխըրքումը հիմայ ինչ թաւուր բանիր կան։

Դուսպար Խալասուգեան

---

## ԼԱՒ ԵՐԱԶ

Արդէն Թիֆլիսը մռայլով պատած՝
Հանգիստ է առնում Մօրֆէի գրկում.
Արդէն համրայրը կեղծիքով սրգուած
Կորել է ձայնը ննջարաններում։

Լռել են, լռել և բերկրանք թախիծ,
Զառանցանք, արցունք և դառը հառաչ.
Միայն անատրբեր անդանի վրից
Թոյլ բորբոքւում է մի լամպար կանաչ—

Ու այն ամենը, ինչ որ խանդարեր
Ունի աշխարհում նշանակութիւն,
Եւ կուրծք, և մաղեր, և մերկ սրունքներ
Ծածկւել են նրա լուսով երերուն։

Եւ նախանձաւիրտ այրը խանդավառ
Վաղուց լռել է հայհոյանքներից.
Նա երազում է, թէ կինն անպատճառ
Կարգի պիտ ընկնի գէթ տասւօտից...

Գելօ-Դէօ

---

## ՕԳՆՈՂ ԸՆԿ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

(Նուէր Բագուի Մարդասիրական Ընկ.)

(Սմանութիւն)

Ժողովում քարտուղարը կարդում է՝

Ընկերութեան միջոցների սղութեան և մեծացող տօների առթիւ և օգնութիւն խնդրող ազքատների թւի շատանալու պատճառով ընկ. վարչութիւնը պատիւ ունի յայտնելու, որ նա ոչ մի հնարաւորութիւն չունի բոլոր խնդրատուներին բաւարարութիւն տալու։

—Զարմանալի է, պարոնայք, որ ընկ. միջոցները քանի գնում քչանում են, իսկ աղքատների թիւը—շատանում—ասում է նախագահը։

—Պէտք է միջոցներ ձեռք առնել, վերջիններիս թիւը պակասեցնելու համար,—առաջարկում է մէկը։

—Ամեն խնդրողին, ամեն մի անգամը 50 կ. աւելի չպէտք է տալ,—նկատում է միւսը։

—Դա աղքատների թւի պակասելուն ոչընչով չի ներգործի,—պարզում է նախագահը։

—Այդ դէպքում միակ միջոցը հետեւալն է, պէտք է որոշել, որ ամեն խնդրատու կպցնի իւր խնդիրքի վրայ 75 կ. մարկա, իսկ նպաստ տանայ 50 կ. դա գզալիօրէն կպզէ աղքատների թւի... քչանալուն...

—Դա, ես գտնում եմ միջոցներից ամե-

նաչականը և խելացին, գոչում է նախագահը, համաձայն էք պարոնայք։

—Այո, այո—գոչում են ձայները։

—Գ. քարտուղար, դառնում է սորան նախագահը կազմեցէք այս սաթխի արձանագրութիւնը։

—Ես կառաջարկէի յաջորդ ժողովին այդ արձանագրութեան աւելացնել հետեւեալ ուղղումը։ որովհետեւ ամեն մի խնդրատուի անձնաւորութիւնը ստուգելու համար, հարկաւոր է լինում տեղեկութիւններ հաւաքել և այդ պատճառով լինում են ծախսեր, ուստի խնդրատուն այդ 75 կ. մարկայի հետ տալիս է Ընկ. ևս դրամով 75 կ.

—Համաձայն էք, բղաւում է ուրախացած նախագահը, որ այդ ուղղումը ևս ընդունէք։

—Այո, այո—միաձայն գոչում է ժողովը։

Նրլլաճ Ծակոյք

## ԴԻՄԻՑ-ԴԻ՞ՄՈՒՑ

### Լքած ամուսինը

Ամուսինը.—(Մտնելով ոստիկանատուն) —Կինս փախել է՛...

Ոստիկանը.—Հանգստացէք, մենք շուտով կը գտնենք նրան...

Ամուսինը.—Արէք ինչ ուզում էք։ Միայն զգուշացնում եմ, որ ես պատրաստ եմ ձեզ վճարել ամսական 200 րուբլի, մինչև իմ կնոջս գտնելը։

### Բարի խորհուրդ

Քո մասին մի ասիր՝ ոչ լաւ և ոչ էլ վատ։ Եթէ ասես լաւը, մինոյն է ոչ ոք չէ հաւատալու, եթէ վատը—մարդիկ կը կարծեն քո մասին աւելի վատը, քան դու ասեցիր։ Ուստի աւելի լաւն է իրեն մասին չխօսել։

### Ինքն իրեն սպառնեց:

Տէրը իւր ծոյլ կառապանին հրամայում է գնալ և անկիւնի խանութից մի լրագիր գնել։

—Դա իմ պարտաւորութիւնը չէ,—ասում է կառապանը։

—Հապա ինչ է քո պարտականութիւնը՞

—Ձիաները ու կառքը լուանալ, և կառքը վարել։

—Այդ դէպքում մաքրիր, ձիաներին, կառքը խոկոյն լծիր և առ Մաշային ու տար նրան, լրագիր առնելու։

## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

### Ն Ա Մ Ա Կ Գ Ա Ն Ձ Ա Կ Ի Ց

Անցեալ տարի տեղիս ս. Լուսաւորիչ եկեղեցու ծխական դպրոցը նիւթական տեսակէտից յաջող եւք է ունեցել՝ շնորհիւ նոյն եկեղ. մի քանի հարուստ մեռելների, որոնց ժառանգներից դպրոցի հոգաբարձ. շնորհիւ իրենց արտասովոր համոզեցուցիչ պերճախօսութեան կարողացել են մի գումար ստանալ դպրոցի օգտին։ Իսկ, ս. Յովհ. դպրոցի նիւթականը վատ է անցել, շնորհիւ հարուստ ծխականների մեռնելուս ժլատ լինելուն, որի պատճառով հոգաբարձութիւնն աղքատ աշակերտներին ուսման վարձը չը տալու համար, տուն է ուղարկում ասելով՝ «եթէ այս տարի ձեր բախտից հարուստ ծխականներ մեռնեն ու դպրոցին փող կտակեն, այն ժամանակ կը գաք։

Այս բոլորը մանրակրկիտ և յստակ անալիզի ենթարկելով տեղ. «Թաթ.» կոմիտէն եկաւ այն եզրակացութեան, որ լաւ է 300 աշակերտ կրթել ու դաստիարակել, ապագայում լաւ քաղաքացիներ ունենալու համար, քան թէ 10 հարուստ, որոնք իրենց գոյութեամբ ժողովրդին քամելուց ու ծծելուց զատ, ոչ մի բանի պէտք չեն. ուստի որոշեցինք, անմիջապէս հեռագրել ի Վերինն Երուսաղէմ, մեր գործակալ Միքայէլին, որ այս տարուայ ընթացքում, իր մօտ հրաւիրէ ս. Յովհ. ծխականներից 10 ձէթ հարուստներին, այն պայմանով միայն, որ մինչև այնտեղ հասնելը, կտակած լինեն դպրոցի օգտին մի չաղ գումար, հակառակ դէպքում, նրանց դուրս վռնդել դէպի սանդարամետ։

Մոծակ

### Ի ն չ ո՞ ւ

—Ինչու երբ ես երգում եմ, դու դուրս ես գալիս պատշգամբ։ Քեզ անտանելի՞ է ինձ լսելը։

Ոչ, վախենում եմ, թէ սենեակումն եղած ժամանակս, ուրիշները կարծեն, թէ ես քեզ ծեծում եմ։

—

### Զ բ ա ղ մ ո ւ ն ք

Հարց.—Եթէ Յ. Սաղաթէլեանը պատգամաւոր ընտրուած չլինէր, այժմ նա ինչով էր զբաղուած։

Պատաս.—Պարապութիւնից,—նստած, «ափսոս ժողովրդական փողերը» վերնագրով մի գիրք էր կազմում։

### ՆԱՄԱԿ ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ

Կաղէթաչի աղբէր, իմ մեղքը ինչ պահեմ, անցած օրը քուչից անցնելիս, տեսայ հայոց ուսումնարանի զալումը մի մեծ «ժողով ժողով» են խաղում։ Ես էլ սուս ու փուս ականջ դրի։ Վարժապետները գանգատւում էին հոգաբարձուների և մանաւանդ մեծ վարժապետ Սումբատ Սումբատովի դէմ, որ իրենց սիրուն բոլոր վարժուհիներին ամեն տարի ասղացնում են (մարդի են տալիս), իսկ վարժապետներին ոչ։ Գանգատւում էին թէ հէր այդ թալիսմը Սումբատով վարժապետ և նախջևանցիք միայն վարժուհիների համար են արել։ Վերջումը ասեցին-եթէ սրանից յետոյ մեզ էլ չպսակէք լաւ լաւ օրիորդների հետ էն ժամանակ մենք էլ «սոցիալ» կդառնանք և զաբաստովկա կանենք, կամ թէ չէ գնեսայ նստգած վարժուհիների ռոճիկներից՝ մեր ռոճիկները աւելացրէք։

Շատ երկար զալմաղալներից ու վէճերից յետոյ՝ կրակոտ Սումբատովը տեղից վեր կացաւ և զողդողուն ձայնով մի այնպիսի ճառ ասեց, որ բոլորը լաց եղան։ Սումբատով վարժապետը արդար դատ վարժապետների պահանջը (տակից աչքով անելով թէ ձեր գործն էլ կգցեմ, միայն ինձ չմոռանաք... հա...) որից յետոյ սաղ ժողովականները որոշեցին, որ մեր ուսումնարանի հոգաբարձուների անունից մի «կանչ» տալ տան ձեր խէրով «Թաթարալի» մէջ։ «Կանչը» կարդալու ժամանակ լուսամուտի տակին նստած գրեցի ու նստարխօս Պաւէլ Արզումանիչի ձեռքով վաւերացնելով, ուղարկում եմ և շատ խնդրում պ. «Թաթարալա», շուտ տպէք ձեր գազէթումը։

Ահա կոպիէն.

«Այն բոլոր հասակաւոր և անհասակ, գրագէտ ու անգրագէտ, գեղեցիկ ու տգեղ, համեստ ու անհամեստ, կոտրուած ու չկոտրուած, քաղ ու չքաղ ազգային վարժուհիները, որոնք բուռն ցանկութիւն ունին նազդեել այնինքն մարդու գնալ՝ թող իրենց ռոճիկներից տարեկան 200—300 րուբլի խոստանան մեր ուսումնարանին (որպէս զի վարժապետների ռոճիկները աւելացնենք), մենք էլ համաձայն մեր նաստալըգնի պայմանին—իրենց սրտի ուզած—սիրուն սիրուն, չաղ չաղ, հարուստ և լաւ փեսայացուներ ճարենք։ Եթէ հարցը ճաշակի գայ, էն ժամանակ մենք կարող ենք նախօրօք ուղարկել տպարէզի վերայ եղած բոլոր նազդ փեսայացուների պատկերները»։

Զուռնաչի Վարդազար

### Զ ա ն է լ

Մօդիստ.—Այն աղջիկը, որը ես առաջարկում եմ քեզ, ունի այնքան օժիտ, ինչքան և տարիք—35։

Փեսացուն.—Ես նրան գտնում եմ աւելի քան ջահել։

—

### Բ ա ր և կ ա մ

—Կարող եմ վստահ լինել, որ իմ հարստանիքիս խաչ եղբայր կը կանգնես։

—Վստահ եղիր! Ես երբէք չեմ թողնում բաղդի կամքին իմ բարեկամներիս, նրանց անբաղդութեան ժամանակ։

### ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

125 օր բացակայութիւնից յետոյ, կրկին Երևան վերադարձայ։

125 օր... քիչ բան չկարծէք։ Շատ, շատ էի կարօտել կեղտոտ, ցեխոտ փողոցներին, ամենապատուական հիւանդութիւնների բացիլներին իր մէջ տեղաւորած՝ կաւագոյն ջրերին ու ափսոսում էի, որ էլ չեմ տես-

նելու այն, որովհետև լսել էի, որ ուսյրաւի գլաւնիները, թէ ցեխն են հաւաքել, ամբար արել ու թէ թայֆայով գնացել են Կրրի-Բուլաղ ջուր բերելու։

Բայց որքան մեծ եղաւ ուրախութիւնս, որ ոչ էն էին արել, ոչ էլ միւսը ու ամեն բան իր տեղում էր մնացել անշարժ... Իսկոյն մի զոյգ կրկնակոշիկ գնեցի ու ընկայ քաղաք ման գալու։ Դէ գիտես էլի, վայն եկել ու տարել էր գլաւնիներին, թէ որ մի մազն անգամ փոխուած լինէր...

Ինչպէս կարելի է հնուց, պապերի, խաների ժամանակներից մնացած բաները փոխել, էտ խօ սրբապղծութիւն ու օրէնքին հակառակ բան կը լինէր։

Մէկ էլ իմացայ, որ այնքան գրածները, թէ Երևանի հայոց դպրոցների հոգաբարձուները ձեռները ծալած, իրենց վաճառականութեամբ են զբաղուած, սուտ է, որովհետև Գայեանեան ուսումնարանի հոգաբարձուները առաջին ժողովներ են արել ու վերջապէս յաջողեցրել են միաձայն որոշումով փակել V դասարանը, որպէս աւելորդ բան. որովհետև նախ շատ սովորելով օրիորդները զզւում են, մէկ էլ որ նրանց պսակւելու ժամանակն է, և ծանօթութիւն են գրել եկող տարի էլ IV-ը փակելու, միւս տարին III-ը և կրկին դարձնեն նոյն ուսումնարանը, ինչ որ դպրոցների բացումից առաջ էր։

Ինչ էք կարծում, պ. խմբագիր, հոգաբարձութիւնն աւելի հեռատեսական լինելու համար, մնացած դասարաններն էլ չպիտի փակէ։

Մէկ անգամից աչքից էլ պրծնենք, աչքացաւից էլ։

Աւտալոյս

## ՈՎ Է ՈՒՄ ԽԱԲՈՒՄ

Շատ ես սիրահար ժպտուն աչերի,
Բայց տես նրանց մէջ ծով կայ վշտերի.
Մի օր համբոյրով տաքիկ խայծած
Քեզ թողնելու են չոր քարի վրան...

Հաւատացիր դու այն անմեղ կոյսին,
Թէ շուտով կուգաս հետը պսակւել.
Բայց դու խաբել ես քանի՞ այդպիսին
Եւ վերջը, անգութ... կամաց հեռացել...

Լիփիպուշի

### Բ ռ ն ւ ե ց

Ամուսինը.—Սոնեա ջան, դէ ես գնում եմ, իմ գործերը կարող են ինձ այնտեղ պահել, այն ժամանակ քեզ կը հեռագրեմ։

Կինը.—Այդ հեռագիրը արդէն կարդացել եմ, վերարկուիդ գրպանումն էր։

## ԴԵՐԱՍԱՆՆԵՐԸ ԲԵՄԻ ՎՐԱՅ ԵՒ ԿԵԱՆՔՈՒՄ

ԲԵՄԻ ՎՐԱՅ.—Էյ... շամպանեայ ու էք... շուտ... այդպէս... բերէք աւելի լաւ տեսակը... յիմարներ, ես ձեզ ցոյց կտամ... հաւը լաւ չէք տապակել... ինչ էք բերաններդ բաց կանգնել... դուրս կորէք։

ԿԵԱՆՔՈՒՄ.—Գրիշա, հիւրասիրիր ինձ մի բաժակ գարեջրու... գիտես Գրիշ, ես այսօր ոչինչ չեմ կերել... բայց ինչ պատահեց ինձ հետ երեկ... ճաշարանի ծառան ինձ մի լաւ ապտակեց։

ԲԵՄ.—Այս քանի հազար րուբլի... այս էլ տասը հազար. ուրեմն նաղդ փող ունեմ երեսուն հազար, չհաշուած ջրաղացը և տները։

ԿԵԱՆՔ.—Պարոն դերասան, եթէ այս ամսին ինձ տան վարձը չը տաք, ես ձեզ դուրս կը վռնդեմ... ինչ մի մեծ փող է, ամսական չորս րուբլի, որ այդքան դժուարանում էք վճարել, իսկ երեկ երեկոյեան իմ աչքերով տեսայ, թէ ինչպէս դուք բեմի վրայ հազարներ էիք համարում։

ԲԵՄ.—Գիտէք, պարոն դերձակ, շորս լաւ չէք կարել, այս անգամ ես ձեզ ներում եմ, միւս տարի աշխատեցէք ինձ գոհացնել... առացէք փողը։

ԿԵԱՆՔ.—Ու, սատանան տանի. ինչ ցուրտ է, այս անտէր կապոպիւտս բոլորովին չի տաքացնում... երանի գիտենամ վերարկու հագնողները չեն մրսում. ես երբէք չեմ հագել և գաղափար էլ չունեմ։

ԲԵՄ.—Համեցէք խնդրեմ... ահա ձեր պահուած ոսկին, արծաթը և հազար րուբլին... տեսնում էք, ինչ արդար մարդ եմ, եթէ դուք տասը տարուց յետոյ վերադառնայիք, դարձեալ կը ստանայիք բոլորը. ես չեմ սիրում ուրիշների սեփականութիւնը իւրացնել... ահա թէ ինչ արդար մարդ եմ։

ԿԵԱՆՔ.—Դուք սուտ էք ասում, ինձ ոչինչ չէք պահ տւել... Մանաւանդ ասում էք, որ ձեզ փող էլ եմ պարտական... իսկ թէ պարտ էլ եմ, չեմ տալիս. ինչ կուզէք արէք։

Ռախօօ

## ՖԵԼԻԵՏՕՆ

### ՆԱՄԱԿՆԵՐ ՎԵՐԻՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻՑ

ՆՈՐԻՆ ՃԱՃԱՆՁԱՓԱՅԼ ՊԱՅԾԱՌՈՒԹԵԱՆ
Տէր և տիրող խամբարալայութեան
Գասպար աղա Կալատուզեանցի

Սիրտատ համբոյրներով արքի սատանայ Սաթայէլից.

Բոպորտախառն զեկուցումն վասն անցից եւ դարձից Վերին Երուսաղէմի։

Պայծառաճաճանչ Գասպար աղա. հաւանական է, ձեզանում շատ են հետաքրքրւում թէ իրենց ծանօթ անձնաւորութիւնները ինչ են անում այստեղ, Վերին Երուսաղէմում։

Այսօր այդ մասին եմ ուզում ձեզ հետ խօսել. այն ժամանակւանից, երբ տեղիդ գործիչները թողնելով մեզասլից երկրագունդը, անցան Վերին Երուսաղէմ, այստեղ աւելի լաւ և ապահով են ապրում, քանց թէ այդտեղ. ի հարկէ դա հասկանալի է, նախ՝ այստեղ ամեն բանի առատութիւն է և երկրորդ փող չլինելու պատճառով, փողը առաջին նշանակութիւն ունի։

Մի գրօշով, օրինակ, դուք կարող էք այստեղ մի ամբողջ շաբաթ հրաշալի, արքայավայել ապրել։

Բնակարանները չափից դուրս յարմարաւոր և բոլոր վերջին տեխնիկայի են կառուցած, ամեն տեղ լողարան և վաննաներ իրենց կրակէ «դուշերով» անպակաս են, թատրոնները ձրի, որտեղ խաղում են մեր ամենալաւ և տաղանդաւոր դերասանները։ Բայց նրանց մասին յետոյ կը խօսենք։

Տասներկու տեսակ կերակուրներից բաղկացած ճաշը, Կախէթու գինուց, Սմիրնովի արաղից, Սարաջեւի կոնեակից հազար նըւազ լաւ ըմպելիքներով, այնչափ չնչին արժէն, որ մի ձէթ կճեպի չափ։

Երջանկութիւնը ակրօպլանով է, համարեա ամենքն էլ ունին։ Ձմեռ չի լինում, ուստի և տաք շորերի կարիք չէ զգացւում։ Հարկեր գոյութիւն չունին, եղածն էլ այնպիսի բաների մասին է, որ ի հարկէ ոչ ոք չի ուզում հարկ վճարել, օրինակ՝ այստեղ սուտ ասողներից հարկ են վերցնում և քանի որ հարկն էլ անչափ ծանր է լինում, այդ պատճառով էլ ոչ ոք սուտ չէ խօսում։

Միով բանիւ էժանութիւնը կատարեալ է. Բանւորական ձեռքերը նոյնպէս էժան են, անգործների թիւը սարսափելի շատ է։ Երևակայեցէք, այն ամենը, որոնք այդտեղ երկրի վրայ էլ, ծոյլ ու անգործ են շրջել՝ այստեղ էլ նոյնպէս են անցկացնում օրերը։ Ամբողջ քաղաքը իր հարիւր միլիոնաւոր ծառուղիներով, պարտէզներով և մրգատու բաղերով, դրանց զբօսանքի տեղ են ծառայում։

Տեղական Բարձրաստիճան Տարատարոսեան խորհրդում, անցեալ օր այդ մասին հարց ծագեց, բայց մի քանի ազդեցիկ անգործներ՝ հարցադրումը վերցնել տուին։

Սակայն լրագրական գործը այստեղ կաղում է և դա հասկանալի է, նոյնիսկ ձեր յայտնի խմբագիրները, որոնք այդտեղ եղած ժամանակ առաջին գործեր էին շինում, այստեղ ամիսներով գրիչ չեն կարողանում ձեռներում բռնել—տեսր և սկանդալներ չեն կարողանում հնարել։

Գրիգոր Արծրունին անցեալները խնդիր մատուցեց իր «Մշակը» տեղափոխել այստեղ՝ հրատարակելու համար, բայց վերջը փոշմանեց և խնդիրը յետ վերցրեց։

Արզար Յովհաննիսեանը նոյնպէս շատ մտածեց, որպէսզի մի լաւ քարտուղար ճարի, բայց ոչ ոք չը համաձայնեց. Սիմէօն Հախումեանը բացէ իբաց մերժեց։ Աղէք-

Մոլլան երեսիս միտիք տուաւ, ասեց քանի տարական ես, ասեցի ութնասուն չորս, ասեց քեզանա հ՞ինչ Թուրք ա իլի- լու, ագանամ մարթ ունես, Թող նա ալ կեայ Թուրքանայ, ասեցի ունամ, չիւնքի որ ասի չունամ, մարթս մեռալ ա, ինձ չէր ունԹու- նիլ։ Ետով հարցուրուց քի, մարթիԹ անը- մը հ՞ինչ ա, ասեցի Բեռսապար Կալաստուզով Հարցրուց քի նա ալ կը Թուրքանայ, ես ա- սեցի այո։

«Գէօզալ-Բաջի,— ասեց Թուրքերան լեւ- զւով մոլլան,— ես ձեզ Թուրք կը չինամ, համմա եսով կը փեչմանէք, չիւնքի ձեր Տէր-Ներսէսի պէս մոլլաներ, մեզ շատ ու- նանք. մեզ մին մոլլա Ֆէյզուլլա ունանք քի, ագանամ ձեր Տէր-Ներսէսը նրա ծխա- կանը լինի, ոէրսէրը ոչ Թէ կը Թուրքա- նայ, բեալքանամ Թեազազան ջուհուդանայ, լաւր նա ա քի, քինացէք ալի հայ իլեցէք, ագանամ ձեր վարԹարեգը, եպիսկոպոսը, ԿաԹողիկոսը և Բագուի իրեսփոխ— հոքա- բարցուները չան պատիժիլ, ան վախտ կը Թուրքանաք։ Ես ասեցի որ արանցանայ պեան չի իլիլ, մեզ Թուրքացրու, եսով, ագանամ մեր Բաքուի ուսումն. հոքաբար- ձուները պատժեցի՞ն, ալի հայ կիլանք, ա- գանամ չէ, հէնց Թուրք ալ կը մնանք.

Մոլլան սաղի իլաւ։ Մէնք մաանք մէչի- Թի մէչ. կանչեց երկու սէյիդ, ինձանա հարցուրին Թուրքերան լեա. ես իմանում, ասեցի հա. ինչ որ ասանք կասեմ, ասեցի հա։ Դէ, ասա։

Լա, Մուսաուլրուհուլլա.
Լա Եօխ Ալլահ.
Նայլաթ սեուրիկա բալըղա.
Դօնզըղ հարամ դի։

Ես չիմ ասեցի, համմա «Լա Եօխ Ալլահ» չի ասեցի։ Սէյիդը հիւրսաուեց։ Ասեցի մի հիւրսաուիլ, սպասանք Շամախիի կոնսիստո- րին, Բաքուի հոքաբարցուների ժողովին, ագանամ Տէր-Ներսէսին երէք ամիս սեան իրկեցին, Լաան Ալլահ ա քի Ալլահ ա, ան- վախտ մենք ալ հայ անք, ագանամ չէ, ոչ Թէ Լաան չի Ալլահ լափ Ալլահն ալ բեալքայ Լա չի։

Սէյիդը ասեց քու անըմԹ ժամանակաւոր կը տինանք Գէօզալ ՖաԹմազգի, իսկ նշա- նածիԹ անըմը Մեշադի Բեռսապար Բեռա- բալայի Կալաստուզօղլի։

Դէ Բեռսապար, հեալալըգա աԹանց սպա- սանք, տեսնանք պեանը հինչով կը վերչանայ։

Մնամ քու քիւրացու՝
Գէօզալ Աղարաջի ՖաԹմազգի

## ՊՈՍՏ-ԱՐԿՂ

*Քերթի. Թուրքմանին.*— Ձեր՝ երկրորդ նամակիցն էլ հ՚էշ բան չը հասկացանք. ուեղի լաւ է եկէք այստեղ և անձամբ պատմեցէք, Թէ ինչ էք ուզում ասել։

*Քերթի. Պեատանց Մուխանին.*— Ձեզ ով իրաւունք ուեց, առանց մեր գիտուԹեան՝ ժողով անել, դա ինչ անկարգուԹիւն է։
Զգոյշ կացէք Թէ չէ՞, խօ գիտէք իմ խասիաԹը։

*Բագու. Տէրունի.* «Ծոցը» ստացանք, իսկ ձեր խնդրած վկայականների մասին՝ յիշեցրէք յունուարին։

*Բագու. Կլլան Ցախովրին.*— Կարդացէք վերինը, բայց ոչ շատ բարձրինը։


## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

О-ДЕ ЛИСЪ №4711

EAU DE LYS

ՍՊԻՏԱԿ, ՎԱՐԴԱԳՈՅՆ ԵՒ ԴԵՂԻՆ ԳՈՅՆԵՐԻ.

Բոլորի կողմից ճանանչւած տուալէտի միջոց

ԵՐԵՍԸ ԼՒԱՆԱԼՈՒ,

Թարմութիւնը, երիտասարդութիւնը պահպանելու և երեսի պզուկները և բոլոր անմաքրութիւնները հեռացնելու համար։

ՖԵՐԴ. ՄԻՒԼՀԷՆՍ

Фердъ Мюлгенсъ

Кельнъ н/Рейнъ отд. въ Ригѣ

6—1







13—6

Ս. և Ա. ՂՈՒԿԱՍԵԱՆՆԵՐԻ



ՁԿՆԱՎԱՃԱՌԻ ՄԱԳԱԶԻՆԸ

(Պուշկինեան փող. տուն Սոմպոլեանի, վրաց սեմինարիայի դիմաց)

Ամեն օր ստացւում է սեփական ձկնարդիւնարերանից Թարմ ձուկ

ՍԵՒՐՈՒԳԱ, ՕՍԷՏՐԻՆ, ԹԱՐԹ

Ունինք մեծ քանակութեամբ Թարթի դօշ, Դօնի և տեղական բալիկ, ճիպա ցալձվալա, եանի և այլն։

ԸՆՏԻՐ ՏԵՍԱԿԻ ՁԿՆԿԻԹ (жидка) ԵՒ ԽԱՒԻԱՐ

Կովկասեան և արտասահմանեան ձկնային կանսերւներ Գները ամենաչափաւոր։ 20—9

ՆՈՐՈՒԹԻՒՆ ԹԻՖԼԻՍ!!

Պուշկինեան պասաժ № 4—6

ՄԻԱԿ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Յատուկ գերձակային պիտոյքների.—Տղամարդկանց և կանացի զանազան կոճակների, մետաքսի և բրդի չերիտների, բամբակի և մետաքսի զանազանագոյն թելերի. ձև անելու չափեր, կաւիճ, մեքենայի իւղ, զանազան սուտաշներ, փունջեր (փիւսկիւլ) զայթաններ։ Այստեղ էլ ընդունւում են պատւէրներ զանազան կտորներից շինւող կոճակների, նոյնպէս ամեն տեսակ փայլեցման ապրանքների. մշտապէս ստացւում են սեզոնի նորութիւններ։ Խնդրում եմ գնորդներին առանց ուշադրութեան չթողնել վաճառատունս և անձամբ համոզւել խանութիս մէջ։

Ապրանքների գները նշանակւած են ամենաէժան։

10—4 Մ. Գ. ԲԱԽՉԻՆԵԱՆՑ

Հեռախօս № 258    Հեռախօս № 258




# ՊԱՐԻԶԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՊԱՏՐԱՍՏ ՀԱԳՈՒՍՏԻ

# „ԵՂԲ. ՍԱՓԱՐԵԱՆՑ և ՏԷՐ-ՍԱՀԱԿՈՎ“

ԳՈԼՕՎԻՆՍԿԻ ՊՐՈՍՊԵԿՏ

ԲԱԺԱՆՄՈՒՆՔ ԲԱԶԻՈՒՄ

*Սեզօնի համար ստացուած է մեծ քանակութեամբ տղամարդկանց, կանացի և երեխաների պատրաստ հագուստեղէն, զինուորական և քաղաքացիական պաշտօնեաների տարազներ, արական և իգական զգեստների համազգեստ։*

*Պատուէրները կատարւում են փորձուած վարպետների հսկողութեամբ շուտ և ճշտութեամբ։* 10—3

---

*Ծխախոտի գործարանից*

**Ն. Ի. ԲՈԶԱՐՋԵԱՆՑ և ՈՐԴ.**

*ի վաճառ է հանուած* ՆՈՐ ՊԱՊԻՐՈՍ

«Товарищъ» 20 հատը 5 կոպ. (միջակ ձևի)
«Дружба» 20 հատը 5 կոպ. (բարակ ձևի)

*Դիտողութիւն.—Առևտրական տան վճռեց ի վաճառ հանել այդ պապիրոսները ամենահասարակ էտիկետներով, որպէսզի այդ կերպով հնարաւորութիւն լինի՝ պ. պ. ծխողներին, միշտ էլ լաւ յատկութեան և աժան գնով ծխախոտ ընձեռել։*

Ամէն տեղ էլ կարելի է պահանջել

*Մեծ քանակութեամբ առած պատուէրները կը կատարուին ըստ չափու հնարաւորութեան։* 10—9




---

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

# „ՍՈՒՐՀԱՆԴԱԿ“

*Գրական-քաղաքական-հասարակական եւ առևտրա-արդիւնաբերական անկուսակցական օրաթերթի*

*Առայժմ լոյս է տեսնում երկուշաբթի օրերը*

*Բաժանորդագինն է մինչև յուն. 1 ր.։*

*Հասցէն՝* Тифлисъ Редакція газеты «Сурандакъ»



*Այս համարից*
*«Խ Ա Թ Ա Բ Ա Լ Ա Ն»*
*տպագրւում է «Կոլոտրա» Ընկ.*
*տպարանում*




Մանուֆակտուրային վաճառք

МАНУФАКТУРН. магазинъ

ՅՈՎ. ԳՐ. ԿԱՃԿԱՃԵԱՆԻ

И. Г. КАЧКАЧЬВА
Сололакск. ул. № 4

Հոկտեմբերի 20-ից, Սոլոլակսկայա փողոցի վրայ, «Գրոմոզնիկ ընկ.» խանութի շարքում, Ազովո-Դոնեան բանկի ներքեւում, (Ամիրաղեանի նախկին խանութի տեղը) բացւած է մանուֆակտուրայի ապրանքների ՎԱՃԱՌՔ. Ստացւած են մեծ քանակութեամբ աշնան նորութիւններ, այն է՝ մետաքսէ, բրդէ, մահուդէ, բամբակէ և բոլոր դպրոցական հիմնարկութիւնների պաշտօնազգեստների կտորներ, աշակերտական ամենալաւ տեսակի մահուդ և զանազան պլէդներ՝

ԿԱՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ

Բրդէ շալեր, պլիւշի, բայկի, պիկէ, ատլասի և Քաշմիրի վերմակներ։

ՔԱԹԱՆԻ ԱՊՐԱՆՔ ԵՒ ՍԵՂԱՆԱՏԱՆ ՍՓՌՈՑՆԵՂԷՆ

ամենալաւ ֆաբրիկաների, գարգինի տիպ, պլիւշի սփռոցներ, թաւիշ, պլիւշ և մանչեստր։ Բազմաթիւ գոյներ։ Սատին, բատիստ, բումազէյ, նանսուկ և չիթ։ Բամբակէ գործւածքներ՝ սպիտակ և գունաւոր՝ սպիտակեղէնի համար և յայտնի ֆաբրիկաների սաւաններ։ Բայկա և ֆլանէլ՝ գունաւոր և սպիտակ։ Արշինով վաճառքը մեծաքանակ վաճառքի գնով։

ՎԱՃԱՌՔԸ ՄՐՑՈՒԹԻՒՆԻՑ ՎԵՐ

ԱՌԱՆՑ ՍԱԿԱՐԿՈՒԹԵԱՆ

—o— ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԻ ՎԱՃԱՌՈՒՄՆ —o— 20—2

МАГАЗИНЪ
Композиція
Тифлисъ, Пушкинскій пассажъ № 8



Громадная экономія
шведскаго композиціон. бѣля.
Носится не менѣе двухъ лѣтъ
Постоянный большой выборъ свѣжаго товара
Воротниковъ, манишекъ и манжетъ.
Единственный представитель для Тифлиса и их окрестностей
по фабричнымъ цѣнамъ
передѣлка въ любой фасонъ безплатно
М. А. КАЛТАГЯНЦА 30—18




Լոյս տեսան և վաճառւում են
ԿԱՐԱՊԵՏ ԱՓԻՆԵԱՆԻ
1 9 1 0 թ.
«ՇԻՐԱԿ»
ԳԱՑԻ ԵՒ ՆՈՑԻ պատկեր. Օրացոյցներ
Բոլորովին նոր յաւելուածներով ճոխացրած ու հարստացրած և գունաւոր պատկերներով զարդարւած։ Դիրքն ու ծաւալը բոլոր հայ օրացոյցներից մեծ և արտաքինով շքեղ։
ՄՈՑԻ օրացոյցը ունի առանձին յաւելւած Վեհափառ Կաթողիկոս Իզմիրլեանի ուղեւորութիւնը Կ. Պոլսից էջմիածին և օծումը։
Գասի օրացոյցի տախտակը պատրաստւած է լիտոգրաֆիայում մի քանի գոյնով և ներկայացնում է «Հայաստանը եւ Հայի անցեալ փառքը»—Հայ թագաւորների և իշխանների պատկերները՝ Հայկ Նահապետ, Արամ Բաշ, Պարոյր Հայկազն, Տիգրան Երւանդեան. Վաղարշակ Արշակունի, Արտաշէս Աշխարհակալ, Տիգրան Մեծ, Արգար Եդեսացի, Վռամշապուհ, Աշոտ Բագրատունի, Աշոտ Երկաթ, Սմբատ Շահն-Շահ, Ռուբէն Իշխան Կիլիկեցի, Լեւոն Ա. Լեւոն Զ. վերջին թագաւոր հայոց։
Գները—Գասինը—50 կոպ., Մոցինը—20 կոպ.
Գումարով գնողներին զեղչ։
Դիմել՝ Александрополь, типографія «Ширакъ»
2—2 Карапету Апиняну

Ճաշարանում

Հիւր.— Գրողը տանի, ապուրի մէջ չիբուխի կոթ կայ

Սպասաւոր.— Այ թէ խաղէինա կարտախանայ հա, տասուտանից մաս ենք գալիս, և չենք գտնում։

ՇՏԱՊԵՑԷՔ ԳՆԵԼ
Ա. Ի. ԱՄԻՐԱՂԵԱՆԻ
Մանուֆակտուրի վաճառատունը Թամամշեանի քարւանսարայում
№№ 19, 22, և 23 առևտուրը վերջացնելու պատճառով
ԱՓՇԵՑՈՒՑԻՉ ԷԺԱՆ
Ծախւում է եղած բոլոր ապրանքը—ամէն տեսակ մետաքսի, բրդի մահուդեղէնի, քաթանի, բամբակի և կահաւորութեան կտորներ։
ՕԳՏՒԵՑԷՔ ՀԱՆԳԱՄԱՆՔԻՑ
10—2

«ԽԱԹԱԲԱԼԱՅԻ» ԿՈՄՊԼԵԿՏՆԵՐ
ՓԱՌԱԿԱԶՄ

| | |
|---|---|
| 1906 թ. արժէ | 5 ռուբլի |
| 1907 թ. | 7 ր. — |
| 1908 թ. | 7 ր. — |

## Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ



—Աստուած պահապան տիկին. ինչ խաբար. ինչի՞ էք եկել այսպիսի աշնան
—Ծնգիր ունիմ. ապահարզան եմ խնդրում։
—Դուք նոր միայն թոյլտուութիւն ստացաք և նորից ամուսնացաք։
—Ոչ, ես երրորդ անգամ ամուսնացայ, մէկն էլ մեռաւ, բայց ինչ արած, ամուսինները վատերն են լինում... խնդրեմ...
—Բարի. կը տեսնենք. համեցէք մեր խուցը։



—Դժւար հաւատալի է, արդեօք կինը մինչև ե՞րբ կարող է սիրել տղամարդուն։
—Ընդհակառակը, շատ հեշտ է. քանի որ կնոջ պահանջած փողը տալիս էք, սիրելի էք. մերժեցէք փող տալ—արդէն ատելի էք։



ԿՈՎԿԱՍԵԱՆ ԶԵՄՍՏՒՕ?



ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀ ԴՐԱԽՏԱՎԱՅՐ... ՈՒՐ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ ԿՈՏՈՐԵՆ ԻՐԱՐ